ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՐԴԻՐՅԱՆ

(Ա. լսարանի սան)



Ի. Մարդիրյան

# ԿՈՄԻՏԱՍԻՆ

Երգեց սրինգըդ քընքույշ, հիացրեց բոլորին,
Երգեց հնչեղ ու զըվարթ, արբեցրեց բոլորին.
Հնչեց սրինգըդ հովվական, կախարդեց բոլորին,
Հընչեց մեղըմ ու նուրբ, արբեցրեց բոլորին:

Խնդաց, թնդաց սրինգըդ, երգից շինականի,
Ու «Հորովելըդ» ձի՜գ արբեցրեց բոլորին.
Թըրթռաց սրինգըդ, սիրո երգից ժողովրդական,
Հասավ սրտի լարերին, արբեցրեց բոլորին:

Եվ լացեց սրինգըդ ղարիբի դառն երգերից.
Ու «Կռունկըդ» սրտամորմոք հուզեց բոլորին.
Եվ որոտաց սրինգըդ մարտի խրոխտ երգերից
Ու «Սիփանա սարդ» ոգեշնչեց բոլորին:

Եվ ձայնը սրընգիդ տարածվեց հեռո՜ւ, հեռո՜ւ,
Օտար երկրներում է՛լ արբեցրեց բոլորին.
Եվ սրինգըդ խառնվեց ժողովրդների մեծ համերգին,
Հայ թովիչ երգերով արբեցրեց բոլորին:

Կըգա ու կանցնի քարավանը դարերի,
Բայց երգդ կապրի՛ միշտ, արբեցնելով բոլորին.
Սերունդներ կըգան, սերունդներ կանհետանան,
Բայց երգդ կհնչի՛ հավերժ, հիացնելով բոլորին: